ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Վարդան Ուռուտյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան,Գյուլիբեխվյան փող. 31/1, բն.24, հեռ.
093-95-11-77, էլ. փոստ՝ vardan@icare.am
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

Ագրոբիզնեսի Կրթության և Հետազոտությունների
Միջազգային Կենտրոն Հիմնադրամ
Գրանցման համար՝222.160.00460
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ Ագրոբիզնեսի Կրթության և Հետազոտությունների Միջազգային Կենտրոն Հիմնադրամը ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը
2. Շահագրգիռ անձի, կազմակերպության լիազորված անձի անձնագրի պատճենը
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ /2-4 էջի սահմաններում
4. Հետաքրքվածության նամակ
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Վ. Ուռուտյան

< 03 >մայիսի, 2016թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016
Մուտք N 5246-16

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն

Հետաքրքրվածության նամակ

Հարգելի գործընկերներ:

Նախ թույլ տվեք «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ԱՀԿՄԿ, ICARE) հիմնադրամի անունից ողջունել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի ստեղծման գաղափարը և սույն նամակով արտահայտել այդ խորհրդի կազմում ընդգրկվելու՝ հիմնադրամի հետաքրքրվածությունը:

ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամը հայաստանյան ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է Երևանում, 2005թ. ապրիլին, ԱՄՆ Տեխասի A&M (գյուղատնտեսության և մեքենաշինության) համալսարանի կողմից: ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամը ավելի քան մեկ տասնամյակ Հայաստանում և տարածաշրջանում ստեղծում է գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտում արդիական, միջազգային չափորոշիչների վրա հիմնված կրթական և հետազոտական հարակայուն կարողություններ:

Հիմնադրամի **կրթական բաղադրիչը** կազմում են Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը (գործում է 2000թ.-ից) և Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիան (գործում է 2014թ.-ից): Արևմտյան ոճի ուսումնական պլանների, միջազգային որակավորում ունեցող դասախոսների, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության արդիական գործիքների միջոցով այս երկու հաստատությունները պատրաստում են ագրոպարենային ոլորտում և հարակից ճյուղերում առաջնորդի դերակատարություն ստանձնելու ունակ բարձրակարգ մասնագետներ: Գինու ակադեմիան այս տարի կավարտի Գինեգործություն և գինու բիզնես մասնագիտացման առաջին շրջանավարտ կուրսը:

ICARE հիմնադրամի **հետազոտական բաղադրիչը**, հմտորեն օգտագործելով արդիական գիտական գործիքակազմի հնարավորությունները, հետազոտող դասախոսների և ուսանողների ուժերով ազգային և միջազգային մակարդակներով հետազոտական աշխատանքներ է իրականացնում գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտներում: Դրանց արդյունքները կենտրոնը հասանելի է դարձնում գյուղատնտեսության ոլորտում, գյուղական համայնքներում գործնական կիրառման համար, ինչպես նաև՝ ակտիվորեն ներկայացնում միջազգային գիտական հանրության ուշադրությանը: Տարիների աշխատանքով հիմնադրամը արժանիորեն վաստակել է միջազգային հեղինակություն և իր հետազոտական ռեսուրսներն ու միջազգային կապերը կարողանում է ի սպաս դնել մեր երկրում իրականացվող պետական գյուղատնտեսական քաղաքականության որոշակի ուղղություններում առաջընթաց գրանցելու նպատակին:

ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի գործունեությունը ոչ միայն համահունչ, այլև ուղղակիորեն նպաստավոր է եղել առհասարակ երկրի ագրոպարենային համակարգի առջև ծառացած խնդիրների լուծման, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ագրարային քաղաքականության իրականացմանը: Հատկապես վերջին մի քանի տարիներին հիմնադրամը, մասնավորապես հետազոտական-փորձագիտական մակարդակով գործուն մասնակցություն է ունեցել նախարարության կողմից գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքի մշակման աշխատանքներին, ձեռնամուխ է եղել զարգացող գինու արդյունաբերության համար ժամանակակից տեխնիկական և կառավարչական կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը՝ միաժամանակ սեփական իրավիճակային ուսումնասիրության հիման վրա բացահայտելով գործող մասնագետների վերապատրաստման-ուսումնատվական կարիքներն ու նրանց անհրաժեշտ արդիական հմտությունները, համակողմանի ուսումնասիրություններ է կատարել և ոլորտի պատասխանատուներին ու առհասարակ

գյուղատնտեսական հանրությանը առաջարկություններ ներկայացրել ագրարային բարձրագույն կրթության որակի ապահովման, սննդի արժեշղթայի, այդ թվում սննդի անվտանգության և սննդամթերքի կորուստների և թափոնների կառավարման վերաբերյալ:

Լինելով Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի ակտիվ անդամ կազմակերպություններից մեկը, ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամը Դաշինքի գործունեության շրջանակում նույնպես օգտագործում է իր գիտակրթական ռեսուրսները՝ անդամ մյուս տեղական ու միջազգային կառույցների հետ փորձելով նպաստել գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ նախարարության կատարած աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Կարծում եմ, ICARE հիմնադրամի գիտակրթական ներուժի մասին խոսող փաստարկների նույնիսկ ոչ լիարժեք թվարկումից պարզ է դառնում, որ հիմնադրամը կարող է գործուն մասնակցություն ունենալ նորաստեղծ հասարակական խորհրդի աշխատանքներին:

Հարգանքով՝

Վարդան Ուռուտյան

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FOUNDATION
02577018

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի տնօրեն

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Տեխասի A&M համալսարանի ասոշիեյթ պրոֆեսոր

Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Վերջին երկու տարիների ընթացքում «Ագրոբիզնես հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամը շարունակել է առաջընթացը իր գործունեության բոլոր հիմնական ուղղություններում՝ հիմնադրամի մաս կազմող երեք կառույցների միջոցով (Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն, Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիա և Ագրոբիզնեսի հետազոտական կենտրոն):

Նշված ժամանակաշրջանում Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնն (ԱՈՒԿ) ավարտել են 41 ուսանող (18-ը 2014թ. և 23-ը 2015թ.), որոնցից 5-ը՝ Վրաստանի Հանրապետությունից: Եվս 17-ը ավարտել են Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը (MAB): ԱՄՆ գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Տեխասի A&M համալսարանի միջև 2000թ. կնքված գործակցային համաձայնագրի հիման վրա գործող Կենտրոնն առաջարկում է ագրոբիզնեսի և շուկայաբանության ոլորտի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող բակալավրիատի և ագրոբիզնեսի մագիստրոսական (MAB) կրթություն: Կենտրոնը պատրաստում է տնտեսագիտական, մարկետինգային և կառավարչական լայն մտահորիզոն, գործարար և տնտեսական վերլուծությունների վերջին մեթոդներին տիրապետող, արդիական հաղորդակցական հմտություններ և անգլերենի գերազանց իմացություն ունեցող մասնագետների: ԱՈՒԿ-ի շրջանավարտները գործնականում խնդիր չեն ունենում մասնագիտական աշխատաշուկայում իրենց արժանի տեղը գտնելու հարցում, ընդ որում դա տեղի է ունենում ավարտելուց հետո առաջին մի քանի ամսում կամ նույնիսկ դեռևս ուսանողական նստարանից: Այս առումով կարևորվում է ուսումնաարտադրական պրակտիկայի ծրագիրը, որը մեծապես նպաստում է գործատուի կողմից մեր ուսանողներին աշխատանք առաջարկելու՝ ավանդույթ դարձած գործելակերպին: Վերջին երկու տարիների ընթացքում ընդլայնվել է ուսումնաարտադրական պրակտիկայի ծրագրի շրջանակում ICARE հիմնադրամի և ԱՈՒԿ-ի հետ գործակցող ընկերությունների շրջանակը՝ ներառելով ագրոբիզնեսի և հարակից ոլորտների նորահայտ ընկերություններ Հայաստանում և Հայաստանից դուրս: Պրակտիկայից բացի, ԱՈՒԿ-ն իրականացնում է նաև ուսումնաճանաչողական այցելություններ ագրոբիզնեսի ձեռնարկություններ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթանում են ընկերությունների արտադրական գործունեությանը, կառավարման համակարգին և մարկետինգային քաղաքականությանը: ԱՈՒԿ-ի առաջարկած կրթության միջազգային որակի, դրա անվիճելի առավելությունների մասին վկայող բազմաթիվ փաստարկներից բերենք միայն մեկ օրինակ. 2016թ. ապրիլին ՀՀ Կենտրոնական բանկի և Եվրոպական երիտասարդական պառլամենտի (EYP) համատեղ «Իմ ֆինանսների ամիս» ծրագրի շրջանակում անցկացված մրցույթի արդյունքներով ԱՈՒԿ-ի ուսանողները հաղթող ճանաչվեցին, այն էլ մեծ առավելությամբ, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Սլավոնական համալսարանի, ԵՊՀ-ի և ՀՊՏՀ-ի թիմերի հետ մրցակցությունում:

Վերջին երկու տարիների կարևորագույն ձեռքբերումն, այնուամենայնիվ, եղել է Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիան, որը Հիմնադրամը հիմնեց 2014թ., Սեմինա Քոնսալթինգ ընկերության հետ համատեղ և Գերմանական համագործակցության ընկերության (GIZ) ֆինանսական օժանդակությամբ: Սա ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի՝ ժամանակին ու տեղին կատարած կարևորագույն քայլ էր և լավագույն արձագանքը մեր երկրում վերջին տարիներին աննախադեպ զարգացում ապրող գինու արդյունաբերության առջև ծառացող այսօրվա փոփոխված մարտահրավերների լուծման համար համարժեք կրթական հիմք ստեղծելու առումով: Շարք մտած գերժամանակակից գինեգործական ընկերությունները միջազգային շուկայում իրենց շուկայախորշը գտնելու համար ունեն ամեն ինչ՝ ամենավերջին տեխնոլոգիաները, խաղողի լավագույն տեղաբնիկ և արտերկրի սորտերը, ամենահամարձակ ծրագրերը ապագայի համար, սակայն չունեն արդիական գիտելիքներով ու հմտություններով զինված տեղացի տեխնոլոգ մասնագետներ և հարկադրված են

դրսից հրավիրել «թանկարժեք» մասնագետների: Ի դեպ, ICARE-ի 2015թ. կատարած 27 գինեգործական ընկերությունների համակողմանի հետազոտության կարևորագույն եզրահանգումներից և առաջարկություններից մեկը վերաբերում էր հենց արդիական գիտելիքների ու փորձի հարցում առկա բացը լրացնելու հրամայական անհրաժեշտությանը: Հիմնվելով գինու արտադրության և շուկայահանման ներկա միտումների վրա, Ի-Վի-Էն գինու ակադեմիան հանձնառություն է ստանձնել ըստ ամենայնի օգնել հայաստանյան գինեգործարաններին՝ առաջարկելու գլոբալ շուկայում մեծապես պահանջարկված եզակի համուհոտով գինիներ: Ոչ լրիվ երկու տարվա պատմություն ունեցող հաստատությունը (2016թ. հունիսին կավարտեն առաջին 14 շրջանավարտները) արդեն առաջատար է Գինեգործություն և գինու բիզնես մասնագիտության գծով: Այն 18 ամսվա նորարարական ծրագիր է, որը հիմնված է Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի համապատասխան ուսումնական պլանի վրա, իսկ դասավանդող դասախոսները ներկայացնում են եվրոպական և ԱՄՆ լավագույն գինու համալսարանները: Գինու ակադեմիայի արագ առաջընթացի հարցում, բացի արտերկրի դոնոր և ծրագրային գործընկեր կազմակերպություններից, մեծապես նպաստում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ղեկավարության պատարաստակամ և ժամանակին աջակցությունը, որը համապատասխան հարկաբաժին է տրամադրել գինու քիմիայի ուսումնական եզակի լաբորատորիայի և համտեսի սրահի համար, որոնք կահավորվել և վերազինվել են տեխնիկայի ու տեխնոլոգիայի վերջին խոսքով: Գինու ակադեմիան շրջանավարտների տրամադրում է ICARE հիմնադրամի և Գայզենհայմի համալսարանի համատեղ հավաստագրեր:

Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ ԳՆ գործունեության հիմնական ուղղություններն ու ընտրված ռազմավարության կարևորագույն առաջնահերթություններն են երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացմանն ուղղված ցանկացած քայլ: ՀՀ ԳՆ վերջին տարիների գործունեությունը բավականին ծավալուն և համապարփակ է եղել: Աջակցություն է տրամադրվել գյուղատնտեսական մթերք արտադրողներին, խթանվել է ենթակառուցվածքների զարգացումը՝ գյուղատնտեսական մթերքը շուկա հասցնելու, կամ պահպանումն ապահովելու նպատակով, ինչպես նաև պետական ծրագրեր են մշակվել արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանման համար:

Թերևս ամենածավալուն և պահանջված ծրագրերից է եղել գյուղատնտեսական համատարած հաշվառումը, որն իրականացվել է 2014 թվականին: Սա առաջին գյուղատնտեսական հաշվառումն էր 1920 թ. հետո: Հաշվառման արդյունքները անչափ կարևոր են ոչ միայն հետազոտությունների իրականացման և ճշգրիտ տվյալների ներկայացման համար, այլ նախ և առաջ քաղաքականության մշակման և դրա արդյունավետ իրականացման համար:

Բավականին ծավալուն և ոչ պակաս անհրաժեշտ է եղել գյուղատնտեսական արտադրողներին տրամադրված սուբսիդավորված տոկոսադրույքով վարկավորումը, ինչպես նաև դիզելային վառելիքի և պարարտանյութի սուբսիդավորումը: Այս ծրագրերն իրականացվում են արդեն մի քանի տարի: Դրանց շրջանակներում գյուղ. մթերք արտադրողները ստացել են.

- Վարկեր գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար, որոնց դիմաց տնտեսավարող սուբյեկտը վճարում է 10% տոկոսադրույք
- Ազոտական պարարտանյութի տրամադրում շուկայականից մոտ 25% ցածր գներով
- Դիզելային վառելիքի տրամադրում շուկայականից մոտ 20% ցածր գներով

Մեծ է առաջընթացը միջազգային կառույցների ֆինանսավորմամբ Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր բերելու և իրականացնելու առումով: Այստեղ կարելի է նշել Հայաստանի գյուղատնտեսության համար կենարար

նշանակություն ունեցող գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները, որոնք իրականացվում են KfW (Վերականգնման վարկերի բանկի) կողմից: Հարկ է նշել նաև նույն կազմակերպության կողմից գյուղատնտեսական վարկավորման նպատակով իրականացվող Հայաստանի բանկային համակարգին աջակցությունը: Հայաստանում Եվրամիության պատվիրակության Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD) ծրագրի մեկնարկը ևս հանդիսանում է հաջողված միջազգային համագործակցության վառ օրինակ: Ոչ պակաս կարևոր են նաև օրգանական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերը:

Հայաստանում հողի սեփականաշնորհումից հետո ձևավորվել են շուրջ 300,000 ֆերրային տնտեսություններ, որոնք սակայն չեն կարողանում արդյունավետ օգտագործել առկա ռեսուրսները՝ փոքր լինելու և ոչ համակցված աշխատանքի հետևանքով: Հետևաբար, քաղաքականության մշակման ոլորտում բավականաին մեծ քայլ կարելի է համարել գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքի մշակումը և կոոպերատիվների ստեղծման գործում Գյուղատնտեսական Նախարարության կողմից կատարված ծավալուն աշխատաները: Թեև այս պահին կոոպերատիվների զարգացման համար կան բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են հողերի կտրտվածությունն ու իրարից հեռու գտնվելը, երկրում մեծածախ շուկաների սակավությունը, մատչելի ֆինանսական միջոցների սահմանափակությունը, այնուամենայնիվ գյուղացիական կոոպերատիվների ձևավորման գործընթացը վստահորեն առաջ է մղվում:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության կողմից շարունակում է սուբսիդավորվել գյուղական վայրերում ջրօգտագործողներին տրամադրվող ոռոգման համար նախատեսված ջուրը (ջրի սուբսիդավորված գինը 11 ՀՀ դրամ է), որը ևս կարևոր նշանակություն կարող է ունենալ գյուղացիական տնտեսության կայուն գործունեության համար և տնտեսության կողմից արտադրվող մթերքի մրցունակության համար: Նույն նպատակով նաև սահմանվել է արտոնյալ գին ջերմատներում օգտագործվող գազի դիմաց:

Վերջին տարիներին կարևորվել է նաև տոհմային անասնապահության զարգացումը և բարձր վերարտադրության սերմերի բազմացման և օգտագործման անհրաժեշտությունը:

Չնայած իրականացված ահռելի աշխատանքին, դեռևս կան բազմաթիվ բնագավառներ, որոնք զարգացման և կատարելագործման կարիք ունեն: Մասնավորապես՝

- Գյուղատնտեսության մասին օրենքի բացակայությունը,
- Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) մասնագետների լրացուցիչ վերապատրաստումն ու գյուղատնտեսական մթերքի արտադրության բնագավառում արդիական գիտելիքների տրամադրումը
- Գյուղատնտեսական սուբսիդիաների առավել ճշգրիտ հասցեականությունը
- Գյուղատնտեսական կրթության (լինի դա միջին մասնագիտական, թե բարձրագույն կրթություն) ոլորտը, որը կարիք ունի լրացուցիչ աջակցության՝ հատագայում որակյալ մասնագետներ տրամադրելու համար:

ԱԿՀՄԿ (ICARE) հիմնադրամը պատրաստակամորեն կաջակցի այս և ցանկացած այլ հիմնախնդիրների հաղթահարման գործում:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Ագրոբիզնեսի հետազոտությունների և
կրթության միջազգային կենտրոն»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
հիմադրի միաձնյա որոշմամբ

«22» [illegible] 2004 թ.

Հիմնադիր՝
Տեխասի գյուղատնտեսական
փորձարկումների կայան (TAES)
խորհրդի փոխնախագահ՝

Ջոնի Ֆազզինո
Johnny Fazzino

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«24» 02 2005 թ.
Գրանցման թիվ 222.160.00460
Վկայական 03W066337

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Գ. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ք. Երևան, 2004թ.

ԿԵՐԴԻՐ 003

Հայաստանի Հանրապետության պետական գրանցման
N 03Ա066337 վկայականի
Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի ազգային իրավաբանական անձանց գրանցման գրասենյակ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գրանցման համար՝ 03Ա066337

Գրանցման ամսաթիվ՝ 2011-05-11 00 ժամից,
գրանցվել է ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ
AM0281696 համարանիշով հանրագրքում
2901 2ԿՈՒՄ ԱՌՅՈՒՍԱՆ ՀՈՂԱՄԱՍ
Սի տարածքային միավորման վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
Գրանցման թիվ՝ 39152140

Գրանցման հիմք՝ 2014-06-17-ին
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՄԱԶՈՒՄԻՆ ՄԻՄՅԱՆ ՎԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆ

Գրանցման ամսաթիվ՝ 24.02.05թ.

Գրանցման համար՝ 222.160.00460

Գրանցման հիմք՝ ՎԿԱՅԱԿԱՆ

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ իրավունքները՝ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ իրավունքները՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերը՝ ՎԿԱՅԱԿԱՆ

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման ամսաթիվը՝ 24.02.05թ.

Գրանցման համարը՝ 222.160.00460

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերի գրանցման ամսաթիվը՝ 24.02.05թ.

Գրանցման համարը՝ 39152140

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերի գրանցման համարը՝ 39152140

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերի գրանցման ամսաթիվը՝ 24.02.05թ.

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերի գրանցման համարը՝ 222.160.00460

Գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հիմքերի գրանցման ամսաթիվը՝ 24.02.05թ.

Գրանցման համարը՝ 39152140